



ՆԱՅ ԵԿԵՂԵՑԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՂԸ

Կյանքի 85-րդ տարում ի Տեր հանգյալ բազմավաստակ և արդյունաշատ ճարտարապետ Բաղդասար Արզումանյանը:

Ծնվել է 1916 թ. հունվարի 1-ին Սիսիանի շրջանի Մագրա (այժմ՝ Բարձրավան) գյուղում:

Միջնակարգ կրթությունը ստացել է ծննդավայրի դպրոցում: 1936 թ. ավարտել է Երևանի Ալեքսանդր Թամանյանի անվան շինարարական տեխնիկումը, 1938 թ. ընդունվել Պոլիտեխնիկական ինստիտուտի շինարարական բաժինը: Երբ սկսվում է Հայրենական Մեծ պատերազմը, մեկնում է բանակ և մարտերով հասնում մինչև Բյոնիքսբերգ: Զորացրվելով, 1946 թ. շարունակում է ընդհատված ուսումը և ինստիտուտը ավարտում 1946 թ.:

Բաղդասար Արզումանյանը հեղինակ է Երևանում և հանրապետության մի շարք քաղաքներում կառուցված համալիրների և շենքերի նախագծերի, որոնց համար արժանացել է պետական բարձր պարգևների:

Ազգային շեշտված դրոշմ կրող այս կառույցներով Բ. Արզումանյանը գրավում է և Վազգեն Առաքինի ուշադրությունը: Երջանկահիշատակ Հայրապետը նրան հրավիրում է աշխատելու Մայր Աթոռի ճարտարապետական հանձնախմբում, և ճարտարապետի համար սկսվում է գործունեության մի նոր շրջան, արդեն հայ եկեղեցաշի-

նության ասպարեզում, որին ամբողջապես նվիրվեց հարկապես կյանքի վերջին շրջանում:

Բաղդասար Արզումանյանի նախագծերով են կառուցվել Մայրավանքի Վանսպուն-հյուրանոցը, Գանձապուրը, որի համար արժանացել է բարերարի՝ Ալեք Մանուկյանի շնորհակալագրին, ինչպես նաև Վեհարանի բակի «Միյուռը» հուշակոթողը և մի աղբյուր-հուշարձան: Իր նախագծով աղբյուր-հուշարձաններ են կառուցվել նաև Գեղարդավանքի և Արարապյան թեմի առաջնորդարանի բակում:

Բ. Արզումանյանը ոչ միայն ճարտարապետ էր և փորձառու ինժեներ-շինարար, այլև նկարիչ և կիրառական արվեստի փորձեր գործերի հեղինակ: Նրա նախագծով է պարարասարվել կաթողիկոսական օնիքս գահը Նոր Վեհարանի գահասրահում, կախարել է կաթողիկոսական գավազանագլուխների, ասսաների, եկեղեցական սպասքի ու հանդերձանքի, Ս. Էջմիածնի շքանշանների բարձրարվեստ ձևավորումները: Նա հեղինակ է նաև ոսկուց պարարասարված «Հայկական Աբբոբենի», «Ոսկե խաչի» և Խորհրդային Հայաստանի՝ զինանշանի, որին այնուհետև հավելեց նաև Հայաստանի Հանրապետության զինանշանը:

Բ. Արզումանյանը արժեքավոր ձևավորումներ է կատարել նաև «Էջմիածին» ամսագրի համար, ինչպես նաև մասնակցել Մայր Աթոռի փորձեր հրապարակությունների ձևավորմանը՝ լինելով և հեղինակը 1970 թ. լույս ընծայված «Հայկական եկեղեցիներ» գրքի:

Բաղդասար Արզումանյանի բազմաբնույթ գործերին բնորոշ են հայ եկեղեցաշինական արվեստի և զարդանկարչության ավանդների ստեղծագործական շարունակումը և համադրումը ճարտարապետության այսօրվա ընկալումների, լուծումների և արտահայտչամիջոցների հետ:

Ի գնահատություն եկեղեցաշեն այս գործունեության, բազմավաստակ ճարտարապետը պարգևատրվել է Հայոց Եկեղեցու «Ս. Գրիգոր Լուսավորիչ» բարձրագույն շքանշանով: Նրա կյանքն այսօր շարունակվում է իր իսկ նախագծով կառուցված Գյումրիի ու Երևանի հարավ-արևմտյան թաղամասի եկեղեցիներով, իսկ վաղը շարունակվելու է այս և արդեն կառուցված ու ամբողջացած մյուս կոթողներով ու արվեստի գործերով:

«ԷԶՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ